«Կրեդո Ֆինանս» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ և ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

նորացման ամսաթիվը 28ապրիլ, 2026թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն տվյալների մշակման և գաղտնիության քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն) կարգավորում է «Կրեդո Ֆինանս» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (հասցեն՝ ՀՀ. ք.Երևան, Կիևյան 2րդ նրբանցք, տուն 16, էլ փոստ՝ credo@credofinance.am, հեռ. 060465555) (այսուհետ՝ «Մենք», «Մեր» կամ «Ընկերություն») պաշտոնական www.credofinance.am և www.icredo.am կայքերից, մոբայլ հավելված/ներ և սոցիալական ցանցեր կամ տեխնիկածրագրային այլ միջոցներ (այսուհետ՝ «Կայք») (այսուհետ նաև՝ Ընկերություն կամ Տվյալներ մշակող) կողմից տվյալների սուբյեկտի (այսուհետ նաև՝ Դուք) անձնական տվյալների մշակման կարգը, նպատակը, մշակվող անձնական տվյալների շրջանակը, տվյալների սուբյեկտի իրավունքները և դրանց առնչվող այլ հարաբերությունները:

1.2. Ընկերության կողմից տվյալների մշակման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, վերջինիս համապատասխան ընդունված Ընկերության ներքին և այլ ակտերով (այսուհետ՝ Կիրառելի օրենսդրություն):

1.3. Կայք մուտք գործելով Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը Ընկերության կողմից Կայքի միջոցով (ներառյալ քուքիներից (cookies) և լոգ ֆայլերից (log files)) ստացված Ձեր անձնական տվյալների մշակմանը՝ համաձայն սույն գաղտնիության քաղաքականության:

1.4. Քաղաքականությունը կարող է Ընկերության հայեցողությամբ ցանկացած ժամանակ փոփոխվել: Յուրաքանչյուր փոփոխություն ուժի մեջ է մտնում Կայքում հրապարակման պահից:

2. Տվյալների հավաքագրում

2.1. Ընկերությունը Ձեր վերաբերյալ անձնական տվյալներ հավաքագրում է տարբեր աղբյուրներից.

2.1.1. Ընկերության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելիս Ձեր կողմից, ինչպես նաև վարկային բյուրոներից և տվյալների մշակում իրականացնող այլ սուբյեկտներից տեղեկություններ ձեռք բերելով,

2.1.2. Կայքի բնականոն օգտագործման ընթացքում, Կայքի միջոցով մատուցվող ծառայություններից օգտվելիս:

2.2. Ընկերությունն իրականացնում է ինչպես անձնավորված, այնպես էլ ապաանձնավորված տվյալների մշակում:

2.3. Ընկերության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելիս, որպես կանոն, հավաքագրվում են տեղեկություններ, ինչպիսիք են՝ Ձեր անունը, ազգանունը, հայրանունը, հանրային ծառայությունների համարանիշը (կամ այն չունենալու մասին տեղեկանքի տվյալները), ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը, վայրը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը, զբաղվածության կարգավիճակը, գործատուի անունը, աշխատանքի վայրի հեռախոսահամարը, ամսական եկամուտը, Ընկերության հետ կապի ձայնագրությունները, տեղեկություններ Ընկերության կամ երրորդ անձանց նկատմամբ Ձեր ընթացիկ և նախկին պարտավորությունների մասին, Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների կապակցությամբ Ձեր կողմից գրավոր, բանավոր, էլեկտրոնային և/կամ կապի ցանկացած այլ միջոցով Ընկերությանն տրամադրված ցանկացած այլ տեղեկություն:

2.4. Կայքի բնականոն օգտագործման, Կայքի կամ այլ հեռակարավարման համակարգերի միջոցով մատուցվող ծառայություններից օգտվելիս, որպես կանոն, հավաքագրվում են տեղեկություններ, ինչպիսիք են՝ Ձեր ինտերնետ կանխագրի (IP) հասցեն, ինտերնետային ծառայությունների

մատակարարը (ISP), Ձեր կողմից օգտագործվող դիտարկիչի (browser) տեսակը, օպերացիոն համակարգը, տեղակայման տվյալներ (location data), ցանցային գրանցամատյաններ (weblogs), տեղեկատվական հոսքի (traffic data) և ցանկացած այլ տվյալ, (ապաանձնավորված տվյալներ):

2.5. Ընկերության կողմից անձնական տվյալների մշակումն իրականացվում է Ընկերության այն աշխատակիցների կողմից, ովքեր ունեն նման իրավասություն:

2.6. Անձնական տվյալների մշակումը Ընկերություն կողմից կարող է առաջադրվել նաև այլ լիազորված անձանց: Վերջիններս կողմից անձնական տվյալների մշակումն իրականացնում են օրենքին համապատասխան Ընկերության կողմից տրված առաջադրանքի շրջանակներում:

3. Տվյալների մշակման նպատակները

3.1 Մինչև պայմանագրային հարաբերություններ հաստատելը Ձեր ինքնության, կոնկրետ ծառայությունից օգտվելու պայմաններին համապատասխանության ստուգումը,

3.2 Ձեր կողմից ներկայացված անձնական տվյալների հավաստիության ապահովման ստուգում, ճշգրտում, թարմացում,

3.3 Ձեր նախասիրությունների և վարքագծի հիման վրա Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների բարելավում, նոր ծառայությունների մշակում, ներդնում և առաջարկ,

3.4 Ձեր պահանջներին համապատասխանող սպասարկման որակի ապահովում, այդ թվում՝ սպասարկման որակի բարձրացում և Ընկերության Հավելվածի բարելավում,

3.5 Ընկերության և Ձեր միջև ձևավորված պարտավորությունների կատարման ապահովումը,

3.6 Ձեզ հետ կապի հաստատումը, ներառյալ՝ փոփոխությունների մասին ծանուցման համար,

3.7 Ընկերության բնականոն ընթացիկ գործունեության ապահովում, ինչպես նաև՝ Ձեր փոխանցումների իրականացում, հաշիվների պահպանում, վարկային բյուրո տեղեկատվության տրամադրում, դատական ակտերի կատարում և այլն,

3.8 մարքեթինգային քաղաքականության իրականացումը, ներառյալ՝ Ընկերության կողմից առաջարկվող ծառայությունները և ակցիաները Ձեզ մատչելի դարձնելը,

3.9 Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների, ներառյալ՝ Կայքի սպասարկման որակի ապահովումը և բարելավումը,

3.10 Կայքի կառավարումը, Կայքում այցելուների շարժին հետևել, միտումների (trends) ուսումնասիրումը, Ընկերության օգտատերերի մասին համընդհանուր տեղեկատվության հավաքագրումը,

3.11 տեղեկատվական նպատակներով ներքին տվյալների բազայի ձևավորումը,

3.12 ցանկացած զեղծարարության, փողերի լվացման և այլ հանցավոր գործունեության հայտնաբերում և կանխարգելումը,

3.13 անձնական տվյալների սուբյեկտի օրինական շահերի պաշտպանությունը,

3.14 Ընկերության իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն,

3.15 Ընկերության կողմից հետապնդվող այլ օրինական նպատակների իրագործումը:

4. Տվյալների օգտագործումը և բացահայտումը

4.1. Անձնական տվյալների մշակման ընթացքում Ընկերությունն ընդունում է ներքին ակտեր, ձեռնարկում անհրաժեշտ և բավարար իրավական, կազմակերպական, տեխնիկական և այլ միջոցներ անձնական տվյալների մշակումը Կիրառելի օրենսդրությանը համապատասխանեցնելու, մշակման անվտանգությունն ապահովելու, չսանկցավորված մշակումը և այլ հնարավոր խախտումները բացառելու համար,

4.2. Ընկերությունը կարող է տվյալների սուբյեկտի վերաբերյալ տեղեկությունները փոխանցել ստորև անձանց ու մարմիններին, որի վերաբերյալ Ձեր համաձայնությունը համարվում է տրված Քաղաքականության ընդունմամբ/հաստատմամբ.

4.2.1. ծառայություն մատուցող սուբյեկտներին,

4.2.2. կառավարության, դատական, իրավապահ, վերահսկող մարմիններին՝ օրենքով սահմանված պահանջի առկայության դեպքում:

4.3. Ընկերությունը իրավունք չունի այլ դեպքերում տրամադրել տվյալների սուբյեկտի վերաբերյալ տեղեկություններ որևէ այլ երրորդ անձի, եթե չունի տվյալների սուբյեկտի կողմից համապատասխան թույլտվություն, եթե դա չի պահանջվում և թույլատրվում օրենքով, կամ եթե տվյալների սուբյեկտն այդ մասին նախապես չի տեղեկացվել:

4.4. Ընկերությանը ծառայություն մատուցող երրորդ անձանց տվյալներ փոխանցելիս Ընկերությունը երաշխավորում է տվյալներ ստացողի կողմից փախանցված տվյալների մշակման և պահպանման համար համապատասխան գաղտնիության և անվտանգության միջոցների ապահովում:

Ընկերությունում Ձեր տվյալները պահպանվում են 5 /հինգ/ տարի ժամկետով՝ սկսած Ձեզ հետ մեր հարաբերությունների ավարտից: Սա մեզ թույլ է տալիս համապատասխանել իրավական և կարգավորող պահանջներին կամ օգտագործել այն օրինական նպատակներով, ինչպիսիք են Ձեր վարկային պատմության կառավարումը և առաջացող ցանկացած վեճի կամ մտահոգության լուծումը:

Անհրաժեշտության դեպքում Ընկերությունը կարող է պահպանել Ձեր տվյալները ավելի երկար ժամանակով, եթե մեզ անհրաժեշտ է այդ տվյալները կարգավորող կամ իրավական պահանջներին համապատասխանելու, խարդախությունը և ֆինանսական հանցագործությունները հայտնաբերելու կամ կանխելու, կարգավորող մարմինների հարցումներին պատասխանելու և այլնի համար: Եթե մեզ անհրաժեշտ չէ պահպանել տվյալները այս ժամանակահատվածում, մենք այն անձնական տվյալների մշակման սկզբունքների պահպանմամբ ավելի շուտ կոչնչացնենք, կջնջենք կամ անանուն կդարձնենք դրանք:

5. Տվյալների սուբյեկտի իրավունքները

Տվյալների սուբյեկտն իրավունք ունի Կիրառելի օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով.

5.1. տեղեկություններ ստանալ իր անձնական տվյալների մշակման վերաբերյալ, ներառյալ՝ մշակման նպատակի, եղանակների, ժամկետների, մշակող սուբյեկտների, մշակման արդյունքում իր համար հնարավոր հետևանքների վերաբերյալ, Ընկերությունից պահանջել իրականացնել անհրաժեշտ գործողություններ իր անձնական տվյալները ամբողջացնելու, թարմացնելու, ուղղելու, ուղեփակելու կամ ոչնչացնելու ուղղությամբ,

5.2. Ընկերությունից պահանջել անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել իր անձնական տվյալների մշակման անվտանգությունն ապահովելու ուղղությամբ,

5.3. հետ կանչել իր անձնական տվյալների մշակման վերաբերյալ համաձայնությունը: Այդ դեպքում Ընկերությունը պարտավոր է դադարեցնել Ձեր անձնական տվյալների մշակումը՝ հետկանչն ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ Ձեր և Ընկերության փոխադարձ համաձայնությամբ կամ օրենքով: Այն դեպքում, երբ Ձեր անձնական տվյալների մշակումն անհրաժեշտ է Ձեր և Ընկերության միջև կնքված պայմանագրերի կատարման համար, Ընկերությունը Ձեր անձնական տվյալների մշակումը դադարեցնում է վերոհիշյալ պայմանագիրը դադարելուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում: Անձնական տվյալների ոչնչացումն իրականացվում է Ընկերության փաստաթղթերի արխիվացման կարգին համապատասխան:

5.4. բողոքարկել Ընկերության գործողությունները կամ անգործությունը կամ որոշումները անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին կամ դատական կարգով, եթե համարում է, որ իր անձնական տվյալների մշակումն իրականացվում է Կիրառելի օրենսդրության պահանջների խախտմամբ կամ այլ կերպ խախտում է իր իրավունքներն ու ազատությունները,

5.5. իրականացնել Կիրառելի օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներ:

6. Քուքիների (cookies) օգտագործումը

6.1. Քուքին (Cookie) փոքր տվյալ է, որը պահպանվում է Ձեր համակարգչի կոշտ սկավառակի վրա, երբ Դուք այցելում եք Կայք: Ընկերությունն այն չի օգտագործում անձնական տվյալներ հավաքագրելու համար: Քուքիների միջոցով ստացված տվյալները վիճակագրական բնույթի են, օգտագործվում են

Կայքի ընդհանուր շարժն ուսումնասիրելու, նախասիրություններ պարզելու, Կայք այցելությունները բարելավելու, Կայքի հարմարավետությունն ու արդյունավետությունը ապահովելու համար:

Մենք հնարավոր է օգտագործենք հետևյալ գործիքները՝ ձեր սարքի և այն առցանց օգտագործելու եղանակի մասին տեղեկություններ հավաքելու համար:

• Transmit Security - Օգնում է ապահովել ձեր մուտքի և նույնականացման անվտանգությունը
• Tealium (Tag Manager) - Թույլ է տալիս մեզ կառավարել քուքիները՝ հիմնվելով ձեր նախընտրությունների վրա
• AppDynamics - Օգնում է հետևել հավելվածի աշխատանքին, որպեսզի այն կարողանա անխափան աշխատել
• LivePerson - Թույլ է տալիս մեզ տրամադրել զրույցի աջակցություն և հաղորդագրությունների ծառայություններ
• Apple Pay - Թույլ է տալիս կատարել վճարումներ՝ օգտագործելով Apple Pay բջջային վճարումների լուծումը
• Google Pay - Թույլ է տալիս կատարել վճարումներ՝ օգտագործելով Google Pay բջջային վճարումների լուծումը
• Brightcove - Թույլ է տալիս մեզ տեսանյութեր նվագարկել մեր հավելվածում, ինչպես նաև օգնում է հետևել ձեր սարքի աշխատանքին
• Creative Virtual - Թույլ է տալիս մեզ համոզվել, որ դուք օգտագործում եք ճիշտ սերվերը, որպեսզի մեր վիրտուալ օգնականը ճիշտ աշխատի
• Google (reCAPTCHA) - Թույլ է տալիս մեզ ստուգել, որ մեր հավելվածի հետ փոխազդեցությունը կատարվում է մարդու կողմից, այլ ոչ թե ավտոմատացված համակարգի կամ «բոտի» կողմից՝ անվտանգության նպատակներով
• AWS բոտերի կառավարիչ - Թույլ է տալիս մեզ ստուգել, որ մեր հավելվածի հետ փոխազդեցությունը կատարվում է մարդու կողմից, այլ ոչ թե ավտոմատացված համակարգի կամ «բոտի» կողմից՝ անվտանգության նպատակներով
• BioCatch - Թույլ է տալիս մեզ ստուգել ձեր սարքի վրա անսովոր կամ կասկածելի գործունեությունը, ինչպիսիք են վնասակար ծրագրերը, որպեսզի կարողանանք կանխել վճարային խարդախությունները և խարդախ գործողությունները
• ThreatMetrix - Թույլ է տալիս մեզ պաշտպանել ձեզ խարդախությունից՝ պարզելով, թե արդյոք ձեր սարքում տեղադրված են վնասակար ծրագրեր կամ ռիսկային ծրագրեր
• Vasco DigiPass - Թույլ է տալիս մեզ հայտնաբերել և կանխել խարդախ գործողությունները մեր հավելվածում
• Qualtrics - Թույլ է տալիս մեզ տրամադրել հարցաթերթիկներ կամ թույլ տալ ձեզ տրամադրել հետադարձ կապ հարցումների միջոցով
• Optimizely և (AudienceStream/EventStream) - Թույլ է տալիս մեզ տրամադրել անհատականացված բովանդակություն տարբեր ձևերով մեր հավելվածներում
• Tealium AudienceStream - Թույլ է տալիս մեզ հավաքել տվյալներ այն մասին, թե ինչպես եք օգտագործում այս հավելվածը՝ ձեր վարքագծի հիման վրա պրոֆիլներ ստեղծելու, ինչպես նաև մեր թվային գովազդի արդյունավետությունը չափելու համար
• Tealium EventStream - Թույլ է տալիս մեզ հավաքել տվյալներ՝ հասկանալու համար, թե ինչպես եք օգտագործում մեր հավելվածը և անհատականացնելու մեր հավելվածը և այլ ծառայությունները
• Contentsquare - Թույլ է տալիս մեզ բարելավել ձեր թվային փորձը, երբ դուք օգտագործում եք մեր հավելվածը

Celebrus - Թույլ է տալիս անհատականացված բովանդակության տրամադրում հավելվածներում և նույնականացնում է վարքագծերը, որոնք կարող է ներկայացնել խարդախության բարձր ռիսկ և տրամադրել դրա հետ կապված նախազգուշացումներ: